ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ	1. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 8-րդ հոդվածի 3-րդ մասում «Սույն օրենքով սահմանված՝ չաշխատող անձի մայրության նպաստը և երեխայի ծննդյան միանվագ նպաստը» բառերը փոխարինել «Սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը, հրատապ օգնությունը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, միչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը, մայրության նպաստը, ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը և թաղման նպաստը» բառերով:	Ընդունվել է: Նախագծով առաջարկվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «3. Սույն օրենքով սահմանված ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը վճարվում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է

			հաշվին կամ սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով:»:	
ՀՀ կառավարություն	2. Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում լրացվող 4-րդ մասում «հաշվին մուտքագրելու ամսվան հաջորդող» բառերը փոխարինել «հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝» բառերով:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է